ՀՈՐ ԱՆԷԾՔԸ

(ԲԱԼԼԱԴԱ)

ԼԵՒՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՑԻ

Եթէ դու յոբս հեծցես
Ցաղատ է վեր է Մասիս,
Զքեզ կայցին Գաղջ,
Ցարցին յաղատ ի վեր է Մասիս,
Անդ կացցես և զլոյս մի՛ տեսցես։

Մովսէս Խորենացի։

Հրակայ Մասիսի ժայռի կատարին
Արտաւազդ արքան՝ նրժոյգն հեծած
Կանգնած է մենակ՝ աղեղը ձեռին.
Եւ զոյգ բարակներն նորա մրոտերիմ,
Իբրև պահապան, նորա մօտ կանգնած։

Հեծում է մրբրիկն, և դանդաղելով
Թանձրը մշուշը ձորերը պատում։
Հողմերն խաղում են պլտրտուելով,
Զիւնի տարափներն չորս կողմը դիզում...

Չորս կողմ—վիթխարի ժայռեր են ահեղ,
Ներքև—սև անդունդ՝ իւր վիհը բացած.

Բոլորը մրուայլ ժանտ է այնտեղ,
Բոլորը վայրի և ամայացած։

Շընչում է մրրրիկն և արքայի հերն,
Նըժոյգի թաւ բաշն օդում ծածանում։
Շներն հաչում են, և ձին սըմրակներն,
Կարծես կատաղած, ժայռին է զարկում։

«Հասէ՛ք օգնութեան, ընկեր-ծառաներ»,
Ահով ու դողով գոչում է արքան.
Սակայն նորա շուրջ հեծում են հողմեր, —
Եւ նորա ձայնին չը կայ պատասխան։

Կըրկին գոչում է, զոռում վերըստին,
Սառ արցունքներ են աչքերին փայլում,
Նըժոյգը դարձեալ դոփում է գետին,
Եւ բարակներըն ողբագին հաչում։

Բայց զո՛ւր. օգնութեան մի ձայն չէ հասնում։
Միայն արձագանքն է խուլ հեռաւոր
Նոցա ձայները ձորի խորքերում
Կըրկնում տըխրագին, որպէս սըգաւոր։

Եւ Արտաւազդըն ահաբեկ այն ժամ
Լըսում է իւր հոր անէծք դառնագին,
Որով նըզովեց մեծափառ արքան
Իւր չարանախանձ, մոլի զաւակին։

«Երբ դու Նըժոյգըդ հեծած հըրեղէն,
Արտաւազդ, Մասիսը որսի երթաս,
Քաջքերըն առնեն, քեզ վեհը ձըգեն,
Եւ լոյս-արևի կարո՛ւ դու մընաս։

Եւ սրտատրրոփ Արտաւազդ արքան
Լսում է յանկարծ վայրենի ձայներ.
Նայում է—այնտեղ, հեռուից խրոնեարամ
Վազում են ահա լերան ոգիներ։

Եւ նա շուտափոյթ ուժգին հարուածեց
Իւր ծանրը ծընկներն ըմբոստ նրժոյգին—
Նրժոյգը թրռաւ, ժայռիցը ոստնեց,
Եւ ողջ կրլանեց անդունդը մրթին։

Մրրիկն դարձեալ մրռունչ է հանում,
Եւ թանձրը մրշուշն պատում է ձորեր.
Հոգմերն խաղում են, հոգմերըն հեծում,
Զորս կողմը դիզում ձիւնի տարափներ...

Էջմիածին, 1891 թ. հոկտեմբեր։